

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան
Բանաս. գիտ. թեկնածու
siranush.hovhannisyan@yahoo.com
ORCID: 0000-0002-0429-278X

**ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԻՄԱՍՏԱԶՐԿՈՒՄԸ
ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔՈՒՄ.
Լեզվական արտորդի ֆենոմենոլոգիա**

Ամփոփում

Սույն աշխատանքում ուսումնասիրվում է լեզվական միավորի իմաստային կարգավիճակի փոփոխությունը կապակցված խոսքում: Դիտարկումները ոչ միայն լեզվաբանական, այլև լեզվափիլիսոփայական և երևութաբանական (ֆենոմենոլոգիական) հարթություններում են: Հոդվածի ելակետն այն դրույթն է, որ իմաստը օբյեկտիվ իրականության մեջ նախապես տրված հատկություն չէ, այլ ձևավորվում է սուբյեկտի ճանաչողական գործունեության ընթացքում և կազմակերպվում լեզվի միջոցով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բառը մեկուսացած վիճակում հարաբերականորեն ինքնուրույն անվանողական միավոր է՝ կապված իրականության առանձին բաղադրիչների հետ: Սակայն կապակցված խոսքում այդ ինքնուրույնությունը խաթարվում է. բառի իմաստը կորցնում է տեղայնացած բնույթը և ենթարկվում է կառուցվածքային վերաձևավորման: Այն դադարում է ինքնաբավ իմաստակիր լինելուց և վերածվում է հարաբերությունների համակարգ ներգրավված տարրի:

Ջուզահեռաբար տեղի է ունենում իմաստի այլ բաշխում, որի շնորհիվ՝ սպասարկու միավորները, որոնք անկախ վիճակում հստակ իմաստ չեն կրում, ստանձնում են խոսքի իմաստային կազմակերպման առանցքային դեր: Այս երկակի գործընթացը հանգեցնում է իմաստի անհամաչափ բաշխման և խախտում է իմաստի և դրա կրողների միջև ենթադրվող համապատասխանությունը:

Վեմ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

Հողվածում այս երևույթը մեկնաբանվում է իբրև լեզվական արտուրդ՝ իր խիստ իմաստով, այսինքն՝ իմաստի վերագրման տրամաբանական կառուցվածքի խզում: Երևութաբանության տեսանկյունից այն փորձառություն է, որտեղ իմաստը ներկայանում է առանց կայուն տեղայնացման՝ շարժական և հարաբերականորեն բաշխված երևույթ:

Հիմնավորվում է, որ լեզուն իրականության պարզ արտացոլման համակարգ չէ: Այն ինքնուրույն կառուցողական դաշտ է, որտեղ իմաստը ձևավորվում է ոչ թե առանձին միավորների ներսում, այլ դրանց միջև հարաբերությունների զարգացող կազմակերպման միջոցով:

Բանալի բառեր – լեզվական միավոր, իմաստազրկում, կապակցված խոսք, իմաստի բաշխում, լեզվական արտուրդ, տրամաբանական խզում, ֆենոմենոլոգիա, իմաստի տեղայնացում, իմաստի դինամիկա

Siranush G. Hovhannisyan

THE SEMANTIC DEVALUATION OF THE LINGUISTIC UNIT IN CONNECTED SPEECH:

Phenomenology of Linguistic Absurdity

Abstract

This study examines the transformation of the semantic status of the linguistic unit within connected speech. The analysis is conducted not only from a linguistic perspective but also within the frameworks of philosophy of language and phenomenology. The central premise of the article is that meaning is not a pre-given property of objective reality; rather, it emerges through the cognitive activity of the subject and is organized by means of language.

The analysis demonstrates that, in isolation, the word functions as a relatively autonomous nominative unit associated with discrete components of reality. However, within connected speech, this autonomy is disrupted: the meaning of the word loses its localized character and undergoes structural reconfiguration. It ceases to function as a self-sufficient bearer of meaning and becomes an element embedded within a system of relations.

Simultaneously, a redistribution of meaning takes place, whereby functional units that do not possess a clearly defined meaning in isolation assume a decisive role in the semantic organization of speech. This dual process results in an asymmetrical distribution of meaning and disrupts the presumed correspondence between meaning and its carriers.

In this article, the phenomenon is interpreted as linguistic absurdity in its strict sense, that is, as a rupture in the logical structure of meaning attribution. From a phenomenological perspective, it manifests as an experience in which meaning appears without stable localization, as a mobile and relationally distributed phenomenon.

It is argued that language cannot be regarded as a simple system of reflection of reality. Rather, it constitutes an autonomous constructive field in which meaning is formed not within individual units, but through the dynamic organization of relations between them.

Key words - linguistic unit, semantic devaluation, connected speech, distribution of meaning, linguistic absurdity, logical rupture, phenomenology, localization of meaning, dynamics of meaning

Сирануш Г. Оганесян

СМЫСЛОВОЕ ОБЕСЦЕНИВАНИЕ ЯЗЫКОВОЙ ЕДИНИЦЫ В СВЯЗНОЙ РЕЧИ

Феноменология языкового абсурда

Аннотация

В данной работе исследуется изменение смыслового статуса языковой единицы в связной речи. Анализ осуществляется не только в лингвистической, но и в лингвофилософской и феноменологической перспективах. Исходным положением статьи является тезис о том, что смысл не является заранее заданным свойством объективной реальности, а формируется в процессе познавательной деятельности субъекта и организуется посредством языка.

Анализ показывает, что в изолированном состоянии слово выступает как относительно автономная номинативная единица, соотнесённая с отдельными компонентами реальности. Однако в связной речи эта автономия нарушается: смысл слова утрачивает свою локализованность и подвергается

структурной перестройке. Слово перестаёт быть самодостаточным носителем смысла и превращается в элемент, включённый в систему отношений.

Параллельно происходит перераспределение смысла, в результате которого служебные единицы, не обладающие в изолированном виде чётким значением, приобретают определяющую роль в смысловой организации речи. Данный двойственный процесс приводит к неравномерному распределению смысла и нарушает предполагаемое соответствие между смыслом и его носителями.

В статье это явление интерпретируется как языковой абсурд в строгом смысле, т.е. как разрыв в логической структуре приписывания смысла. С феноменологической точки зрения он проявляется как опыт, в котором смысл представлен без устойчивой локализации как подвижное и распределённое явление.

Вместе с тем обосновывается, что язык не может рассматриваться как простая система отражения реальности. Он представляет собой самостоятельное конструктивное поле, в котором смысл формируется не внутри отдельных единиц, а посредством динамической организации отношений между ними.

Ключевые слова: языковая единица, обесценивание смысла, связная речь, распределение смысла, языковой абсурд, логический разрыв, феноменология, локализация смысла, динамика смысла.

Մուտք

Իմաստի խնդիրը լեզվաբանության և փիլիսոփայության մեջ ավանդաբար դիտարկվել է որպես իրականության հետ անմիջականորեն կապված երևույթ: Ենթադրվել է, որ աշխարհը արդեն բաժանված է առարկաների, գործողությունների և հատկանիշների, իսկ լեզուն պարզապես արտացոլում է այդ բաժանումը՝ բառերի միջոցով փոխանցելով դրանց իմաստը: Այս մոտեցման հիմքում ընկած է այն կանխադրույթը, որ իմաստը օբյեկտիվորեն առկա է իրականության մեջ և անկախ է այն ընկալող սուբյեկտից:

Սակայն նման պատկերացումը անտեսում է մի հիմնարար հանգամանք. **իրականությունը ինքնին** չի տրվում որպես իմաստավորված կառուցվածք (Heidegger, 1962): Այն ներկայանում է որպես **չկազմակերպված տրվածություն**, որը իմաստ է ստանում միայն այն պահին, երբ ընկալվում է: Այսպիսով, իմաստը չի նախորդում ընկալմանը, այլ առաջանում է դրա ընթացքում՝ որպես սուբյեկտի և օբյեկտիվության փոխազդեցության արդյունք:

Այս առումով՝ իմաստը սկզբունքորեն սուբյեկտիվ է (Sartre, 1992)՝ ոչ թե կամայականության, այլ սահմանվածության տեսանկյուններից: Այն գոյություն ունի միայն այն գիտակցության համար, որը կազմակերպում է փորձառությունը՝ տարբերակելով, սահմանելով և անվանելով: Առանց այդ գործընթացի՝ իրականությունը մնում է որպես ինքնին հոսք, որը դեռևս բաժանված չէ իմաստային միավորների:

Այլ կերպ ասած՝ **իրական իմաստի որոնումները** օբյեկտիվության կտրվածքով կոչված են **հավասարվելու գրոյի**, քանի որ իմաստը՝ որպես օբյեկտիվություն, ոչ թե կա, և պետք է պարզապես գտնել այն, այլ առաջանում է այնտեղ, որտեղ սկսվում է սուբյեկտի ճանաչողությունը (Husserl, 2001; Moran, 2000): «Ես ճանաչում եմ աշխարհը» պարզ և հանրածանոթ ձևակերպումը նույնն է թե «Ես որոնում եմ իմաստներ»: **Օբյեկտիվության բաղադրիչների մասնավոր գոյությունները մեկին մեկ հարաբերակցությամբ արտացոլում են ստանում հողաբաշխ կապակցությունների միջոցով և այդպիսով վերացարկվում սեփական գոյությունից՝** պարադոքսայնորեն վերածվելով բացարձակ օբյեկտիվությունների, երբ ձեռք են բերում իրենց ծնող գոյությունը պարփակող և դրանից բխող բոլոր հնարավոր հարաբերություններն արտահայտելու ներուժը: Այս ամենը կառուցվածքային լեզվաբանությունը կանվանի բառույթ, բառ, բառի քերականական հնարավորություններ թե մի այլ եզրույթով, նույնիսկ կարևոր էլ չէ: Կարևորն այն է, որ ինչպես օբյեկտիվության մեջ են բաղադրիչները պայմանավորված մեկը մյուսով, թելադրում մեկը մյուսին, հավելյալ հնարավորություններ ընձեռում մեկը մյուսին, այդպես էլ բառը՝ որպես լեզվական միավոր, առաջին հերթին արտահայտում է այդ մասը՝ իբրև իմաստային խտանյութ, ապա այդ խտանյութը տարրալուծում տարբեր կապակցությունների մեջ՝ կախված տվյալ պահին սուբյեկտիվ անհրաժեշտությունից:

Լեզուն այս ամբողջ համատեքստում ոչ թե որպես արդեն տրված **իմաստների փոխանցման միջոց** է, այլ այն հիմնական մեխանիզմը, որի միջոցով իմաստը ձևավորվում և հաստատվում է: Այն ոչ միայն արտահայտում է, այլ նաև կառուցում է իմաստային տարբերություններ, սահմանում է իրողությունների ձևերը, ստեղծում օբյեկտիվացման ենթակա նորերը և կազմակերպում է փորձառությունը հաղորդելի կառուցվածքի մեջ:

Այս տեսանկյունից՝ լեզվական միավորի իմաստը չի կարող դրա ներառած կայուն հատկություն դիտարկվել: Այն պետք է հասկանալ զարգացող, հարաբերական և խոսքային ամբողջության մեջ ձևավորվող երևույթ: Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել նաև այն ավանդական

Վեդ համահայկական հանդես, ժԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

պատկերացումը, ըստ որի՝ բառը լեզվի հիմնական և ինքնաբավ իմաստակիր միավորն է:

Առաջարկում ենք դիտարկել, թե ինչպես է կապակցված խոսքում **լեզվական միավորը կորցնում իր ինքնությունն իմաստային արժեքը**, և ինչպես է այդ գործընթացը ուղեկցվում իմաստի հակադարձ բաշխումով: Այս երևույթը մեկնաբանենք ոչ միայն իբրև լեզվաբանական կառուցվածք, այլ գոյաբանական լարվածություն, որը կարելի է նաև կոչել լեզվական արքայադուրի երևութաբանություն: Աբսուրդը դրսևորվում է այն հանգամանքում, որ լեզվում իմաստը չի համընկնում իր ակնկալվող կրողների հետ:

Լեզվաբանական ավանդական մոտեցումները հանգում են նաև նրան, որ բառը լեզվի հիմնական իմաստակիր միավորն է. այն ունի համեմատաբար կայուն, սահմանելի և «նյութական» իմաստ: Սակայն կապակցված խոսքի վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվական իրականությունը շատ ավելի բարդ է: Խոսքի մեջ բառը հաճախ կորցնում է ինքնությունն իմաստային արժեքը և դառնում է ավելի մեծ միավորի՝ նախադասության կամ խոսքային ամբողջության բաղադրիչ: Սա նման է նրան, երբ օբյեկտիվության մեջ տեղի է ունենում որևէ իրադարձություն, որ ներառում է ինչ-ինչ իրողություններ՝ իրականության մասեր, այդ իրադարձությունը դիտվում և ընկալվում է մեկ միասնական «մաս», այլ ոչ թե մասերից բաղկացած ընթացք: Ինչ խոսք, այդ ընթացքը գոյություն չէր ունենա առանց այն բաղադրող մասերի, բայց այնուամենայնիվ, այդ ընթացքը մեկ առանձին միասնական իմաստ է ինքնին, իսկ այն բաղադրող մասերը տվյալ ընթացքից դուրս պարզապես մասնավոր իմաստներ ունեցող միավորներ: Այսպես, օրինակ՝ բաժակն ընկնում է սեղանից և կտրվում. իրականության այս ընթացքը բաղկացած է «բաժակ», «սեղան» հատվածներից, «կտրվել» ընթացքից, «և» հարաբերությունից: Ըստ էության, **այս բոլորը իրականության մեջ առանձին գոյություն ունեցող մասեր են, որոնք տվյալ պահին միավորված են մեկ իրադարձության մեջ, նախադասությունն անվանում է այդ իրադարձությունը ամբողջության մեջ, և այդտեղ երկրորդական են դառնում առանձին իմաստները՝ տեղի տալով այն կարևոր հանգամանքին, թե՛ ինչ-որ բան եղավ:**

Այս գործընթացը՝ մասերի անվանումների կապակցումը նրանցից խոշոր միավորի սահմաններում, ոչ միայն լեզվաբանական երևույթ է, այլև ունի **գոյաբանական բնույթ**, և դրա շնորհիվ է, որ լեզուն առհասարակ ձկունորեն հաղորդակից է միաժամանակ և՛ օբյեկտիվ տրվածությամբ, և՛ սուբյեկտիվ ներքին տարածությամբ:

1. Լեզվական միավորը՝ իմաստի կրող

Այնպես, ինչպես օբյեկտիվ տրվածության բաղադրիչ մասերը գոյություն ունեն միմյանց նկատմամբ հարաբերական անկախության մեջ՝ որպես ընկալման մեջ տարբերակվող, սահմանազատվող և ինքնուրույն միավորներ, լեզվական համակարգում նույնպես կարելի է ենթադրել կառուցվածքային համարժեքություն: Լեզուն ամբողջացնող բառային միավորները հարաբերականորեն ինքնուրույն տարրեր են, որոնք համընկնում են զգայական առաջնային ընկալման միջոցով հասանելի իրականության բաղադրիչների սահմանների հետ:

Այս **նախնական համընկնումը** կարելի է դիտարկել որպես անվանողական (նոմինատիվ) **համապատասխանության սկզբնական ձև**, որտեղ ընկալվող իրականության տարրերը ստանում են իրենց լեզվական համարժեքները: Այս հարաբերությունը կարելի է պայմանականորեն ձևակերպել այսպես.

$$\text{իրողություն (R)} \approx \text{անվանում (W)}$$

Այսինքն՝ իրականության յուրաքանչյուր տարբերակված միավոր (R) լեզվում ստանում է իրեն համապատասխան բառային միավոր (W): Այս փուլում ենթադրվում է, որ բառը պահպանում է անմիջական կապ իր անվանած իրողության հետ, և լեզուն ներկայանում է որպես այդ համապատասխանությունների համեմատաբար կայուն համակարգ: Ուրեմն բառը անկախ վիճակում ընկալվում է իբրև հարաբերականորեն ինքնուրույն իմաստային միավոր: «Սեղան», «մարդ», «զնալ» կամ այլ բառերը ունեն մասնավոր, որոշակի նշանակություն, որոնք կարող են դիտարկվել իբրև իրականության համապատասխան բաղադրիչների լեզվական արտացոլումներ: Այս իմաստով՝ բառը լեզվի հիմնական բջիջն է (Saussure, 1966), որով կառուցվում է խոսքը:

Սակայն բառի մասին այս պատկերացումը հիմնված է մի կարևոր ենթադրության վրա այն է՝ իմաստը հենց բառի մեջ է (Frege, 1952)՝ նրա ներքին, ինքնաբավ և կայուն հատկությունն է: Սա նշանակում է, որ գոյություն ունի ուղիղ և մշտական համապատասխանություն.

$$R \leftrightarrow W$$

Սույն բանաձևում բառը (W) իրողության (R) անմիջական լեզվական կրողն է:

Մինչդեռ կապակցված խոսքի դիտարկումից պարզվում է, որ այս ենթադրությունը լիովին չի արդարացվում. երբ բառը դուրս է գալիս մեկուսացած վիճակից և ներգրավվում է խոսքային ամբողջության մեջ, այն այլևս չի պահպանում իր նախնական ինքնաբավ իմաստային կարգավիճակը: Այն մտնում է հարաբերությունների դաշտ (Wittgenstein, 1953), որտեղ նրա իմաստը պայմանավորվում է ոչ թե իր ներսում եղած բովանդակությամբ, այլ նրա տեղով և գործառնությամբ ամբողջ կառուցվածքի ներսում: Այս փոփոխությունը կարելի է նկարագրել հետևյալ կառուցվածքային անցումով.

$$W \rightarrow S(W) \rightarrow F \rightarrow M$$

Այս բանաձևում W -ն բառային միավորն է, $S(W)$ -ն՝ նրա ներգրավվածությունը խոսքային ամբողջության մեջ, F -ը՝ տվյալ ամբողջության մեջ նրա գործառնությամբ, M -ը՝ վերջնական իմաստային արժեքը:

Այսպիսով, բառի իմաստը կապակցված խոսքում այլևս նրա ներքին հատկությունը չէ, այլ վերածվում է կառուցվածքային և հարաբերական արդյունքի **իմաստ = գործառնությամբ (խոսքի մեջ) կամ ավելի հակիրճ՝ $M = f(S)$ բանաձևով:**

Սա նշանակում է, որ նախնական անվանողական համապատասխանությունը ($R \leftrightarrow W$) խոսքի մակարդակում ենթարկվում է էական վերափոխման. բառը այլևս իրողության ուղղակի «կրող» չէ, այլ միջնորդավորված է ամբողջական կառուցվածքով և նույնիսկ արտալեզվական համատեքստով:

Առաջանում է տեսական լարվածություն երկու մակարդակների միջև. մի կողմից՝ բառը՝ որպես անվանում, ենթադրում է անմիջական կապ իրականության հետ, մյուս կողմից՝ խոսքի մեջ այդ կապը դառնում է հարաբերական, միջնորդավորված և կառուցվածքային:

Հենց այս լարվածությունն է հիմք տալիս խոսելու լեզվական միավորի իմաստային տարրալուծման կամ ավելի կտրուկ՝ իմաստազրկման մասին, սակայն ոչ թե իբրև առհասարակ իմաստի վերացում, այլ իբրև դրա տեղաշարժ և վերասահմանում կառուցվածքի ներսում:

2. Իմաստազրկումը կապակցված խոսքում

Կապակցված խոսքը բառին պարտադրում է մի ռեժիմ, որտեղ նրա իմաստը այլևս չի գործառնում իբրև ինքնուրույն ներկայություն, այլ ենթարկվում է ընդհանուր հոսքի ներքին «կարգապահությանը» (Drożdżowicz, 2023): Բառը, մտնելով նախադասության մեջ, հայտնվում է այնպիսի դաշտ-

տում, որտեղ առաջնայինը ոչ թե նրա «ինչն» է՝ գոյությունը, այլ՝ ամբողջի ներսում «ինչպես է աշխատում»-ը, այսինքն՝ ներուժը՝ գործառույթով շրջանակված: Այս անցման պահին բառը կարծես հրաժարվում է առանձնացվածությունից և ընդունում է կառուցվածքային բաղադրիչի կարգավիճակ:

Այդ կարգավիճակում է դրսևորվում բառի ոչ պայմանական, պատճառաբանված բնույթը, որովհետև իմաստը հենվում է ոչ թե զգայելի իրողության, այլ սուբյեկտիվ վերլուծության վրա (Drożdżowicz, 2024) և վստահելիության առումով իրական է ավելի, քան օբյեկտիվությունից զգայաբաններով ստացված գիտելիքը: Այստեղ է առաջանում բառի երևութաբանական արժեքը. երբ օբյեկտիվ համընդհանուր իմաստային ըմբռնումը տեղի է տալիս սուբյեկտիվ ընկալումների հիման վրա առաջացած իմաստային նոր շերտավորումը՝ ապահովելով բառի ներքին տարածության ընդհուպ մինչև անսահմանություն ընդլայնվելու հնարավորությունը:

Եվ փաստորեն **կապակցված խոսքում**, այսինքն՝ կառուցվածքի բաղադրիչի կարգավիճակում տեղի է ունենում բառի ոչ թե **իմաստի պարզ փոփոխություն, այլ նրա տեղային լուծարում**՝ հոգուտ ամբողջական կառուցվածքի արժեքայնության: Բառը կառուցվածքում այլևս մասնավոր իմաստային միավոր չէ, այլ անցումային հանգույց, որով անցնում, շարժվում է խոսքի ընդհանուր իմաստային ուղղվածությունը: Բառի հիմնական ձևային սահմանները մնում են անփոփոխ, սակայն նրա իմաստային ինքնությունը դադարում է լինել ինքնաբավ, այն կախվածություն է ձեռք բերում մյուս բաղկացուցիչներից: Այստեղ կարող է մոլորություն առաջանալ, թե ձևային առումով ևս սահմանները խախտվում են, քանի որ ավելանում են քերականական ձևույթներ, սակայն պետք է նկատի ունենալ, որ ամեն քերականական ձևույթ ինքնին անվանողականությամբ է օժտված (Saussure, 1966; Frege, 1952) և ունի սեփական իմաստային միտումը՝ անվանելով հարաբերություն, որ բնորոշ է առանձնապես տվյալ միավորին: Ուստի նույնիսկ քերականական ձևույթի ամկայությամբ բառը **սահմանների կորուստ չի ունենում, այլ պարզապես դրանց գումարվում է քերականական ձևույթը:**

Բառի՝ կառուցվածքային բաղադրիչի վերածվելու գործընթացը կարելի է դիտարկել յուրահատուկ «իմաստային խտության վերաբաշխում»։ այն, ինչ մեկուսացված վիճակում խտացված էր բառի մեջ, կապակցված խոսքում բաշխվում է ամբողջ կառուցվածքի վրա (Wittgenstein, 1953; Soames, 2010): Բառը չի անհետանում, սակայն նրա իմաստը այլևս չի կենտրոնանում նրա ներսում. այն տարածվում է և դառնում ընդհանուրի հատկություն: Օրինակ՝ «Ես չեմ գնացել:» նախադասության մեջ առանձին վերց-

րած «ես»-ը և «գնալ»-ը ունեն հստակ սահմանելի իմաստներ: Սակայն խոսքի մեջ դրանք չեն ձևավորում այն իմաստային կենտրոնը, որի շուրջ կազմակերպվում է արտահայտությունը: Դրանք ներկա են, սակայն այդ ներկայությունը չունի ինքնուրույն ընդգծվածություն: Նրանց իմաստը գործում է ոչ թե իբրև առանձին շերտ, այլ ընդհանուր կառուցվածքի առաջին հայացքից անընկալելի բաղադրիչ:

Բառը կապակցված խոսքում անցնում է յուրահատուկ փոփոխության. այն դադարում է իմաստի կենտրոն լինելուց և վերածվում է իմաստի անցնան հատվածի (Ricoeur, 1977): Նրա դերը ոչ թե ընդամենը անվանելն է և իմաստը ընդգրկելը, այլ այն փոխանցելն ու ներհյուսելը ավելի լայն համատեքստում:

Այս երևույթը կարելի է անվանել լեզվական միավորի իմաստագրկում, եթե այդ հասկացությունը մեկնաբանվի ոչ թե իբրև իմաստի կորուստ, այլ նրա «անտեսանելիացում» հանուն ավելի մեծ միավորի պարունակության, որ կոչվում է տեղեկույթ կամ ավելի լայն ձևակերպումով՝ բովանդակություն: Բառի իմաստն այդ հարթությամբ այլևս շեշտադրելի չէ, դառնում է ասես թափանցիկ և գործում այնքան անվրեպ, որ նրա նվազագույն շեղումը առաջացնում է բովանդակության լիարժեք փոփոխություն. երբեք հնարավոր չէ փոխանցել միևնույն բովանդակությունը՝ փոփոխելով թեկուզ բառի դիրքը ընդհանուր շղթայում: Ուրեմն կապակցված խոսքը ոչ թե պարզապես միավորում է բառերը, այլ փոխում է նրանց գոյության եղանակը: Բառը այստեղ գոյություն ունի միայն այնքանով, որքանով ներգրավված է ամբողջի շարժման մեջ: Հենց այս գոյության եղանակի փոփոխությունն է, որ հիմք է տալիս խոսելու լեզվական միավորի իմաստագրկման մասին՝ որպես կառուցվածքային և ոչ թե բացասական երևույթի: Գուցե շատ առարկայական հնչի, բայց դա նման է ուղտերի կազմակերպված ընթացքին, որտեղ յուրաքանչյուր ուղտ ուղտ է, սակայն նրանց ամբողջությունը ոչ թե պարզապես ուղտեր են, այլ քարավան:

3. Իմաստի վերաբաշխումը

Կապակցված խոսքում իմաստային զարգացումը չի սահմանափակվում միայն բառային միավորների անկախության թուլացումով: Նույն գործընթացի ներսում ձևավորվում է այնպիսի հակադիր ուղղություն, որի շնորհիվ՝ իմաստային ծանրությունը տեղափոխվում է այնպիսի տարրերի վրա, որոնք մեկուսացված վիճակում գրեթե չեն դրսևորում ինքնուրույն նշանակություն:

Խոսքը վերաբերում է այն միավորներին, որոնք ավանդաբար համարվում են սպասարկու կամ երկրորդական՝ կապեր, շաղկապներ, վերաբերականներ և նույնիսկ ձայնարկություններ: Անկախ վիճակում դրանք չեն ձևավորում ամբողջական, ինքնաբավ իմաստային սահմաններ. դրանց նշանակությունը կա՛մ ընդհանրական է, կա՛մ կախված է համատեքստից այնքան, որ առանց դրա գրեթե անորոշ է:

Սակայն խոսքի ներսում այս միավորները հայտնվում են այլ կարգավիճակում: Սկսում են ոչ թե լրացնել արդեն առկա իմաստը, այլ սահմանել այն: Նրանց միջոցով է կառուցվում նախադասության իմաստային ուղղվածությունը, տրամաբանականությունը, ժամանակային, եղանակային կամ ժխտական բնույթը:

Այս փոփոխությունը հատկապես հստակ երևում է այնպիսի կառուցվածքներում, որտեղ **խոսքի ընդհանուր իմաստը կախված է մեկ փոքր միավորից**: «Ես չեմ տեսել, բայց համոզված եմ:» նախադասության մեջ «բայց» շաղկապը, լինելով ձևաբանականորեն համեմատաբար սահմանափակ և ինքնուրույն իմաստով աղքատ, որոշում է ամբողջ արտահայտության իմաստային ուղղությունը: Առանց դրա՝ նույն բառային կազմը կունենար **սկզբունքորեն այլ նշանակություն** կամ «Ավա՛ղ, նա այլևս չէր հիշում» նախադասության մեջ «ավա՛ղ» միավորի բացակայությունը էականորեն փոխում է նախադասության բովանդակության վեկտորը, այսինքն՝ վերածում է ընդամենը փաստի արձանագրության, թե նա այլևս չէր հիշում, այլ ոչ թե «ես ցավում եմ նրա չհիշելու փաստի առթիվ»:

Այսպիսով, կապակցված խոսքում տեղի է ունենում իմաստի յուրահատուկ վերաբաշխում: Այն միավորները, որոնք նախնական մակարդակում չեն կրում ծանր իմաստային բեռ, դառնում են ոչ թե օժանդակ, այլ սահմանող:

Ձևավորվում է իմաստի անհամաչափ բաշխում, որտեղ լեզվական միավորների արժեքները չեն համապատասխանում նրանց նախնական «իմաստային կշռին»: Իմաստային հազեցածությամբ բառերը խոսքում նահանջում են և կորցնում իրենց կենտրոնական դիրքը: Փոխարենը՝ ձևաբանական և ծառայողական տարրերը ստանձնում են իմաստային կազմակերպման (Searle, 1969) հիմնական գործառույթը, որը սովոր ենք կապակցության տրամաբանություն անվանել:

Սա պատահական կամ երկրորդական երևույթ չէ խոսքի արտադրության մեծանիգմում: Սա խոսքի ներքին կառուցվածքային սկզբունքներից մեկն է, որի միջոցով իմաստը դառնում է շարժական և

Վե՛ր համահայկական հանդես, ժԸ (ԻԴ) ցարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

հարաբերություններից կախված (Ricoeur, 1977): Այստեղ իմաստային վերաբաշխումը ապահովում է համակարգի տարբեր մակարդակների միջև դինամիկ հավասարակշռություն: Այս երևույթի շնորհիվ է լեզուն դառնում գերտարողունակ՝ նույնիսկ ավելի տարողունակ, քան օբյեկտիվ իրականությունն է (Ruthrof, 2024), քանի որ լեզվի շնորհիվ հնարավոր է դառնում ոչ միայն արտահայտել օբյեկտիվության պատկերը, այլ նաև ստեղծել նոր իրականություն՝ լիարժեքորեն կառավարելի սուբյեկտի գիտակցության կողմից:

4. Տրամաբանական խզում. լեզվական արսուրդը՝ կառուցվածքային հակասություն

Վերոնշյալ տեղաշարժերը բացահայտում են լեզվական կառուցվածքի ներսում գործող մի արմատական խզում, որը անվանում ենք լեզվական արսուրդ՝ խիստ իմաստով: Սա միայն կառուցվածքային անհամապատասխանությունը չէ, այլ իմաստի վերագրման տրամաբանության խախտում (Frege, 1952; Soames, 2010): Այստեղ խզվում է այն հիմնարար սկզբունքը, որի վրա կառուցված է մեր մտածողությունը իրականության մասին: **Մի կողմից՝ բառը անվանում է իրականությունը, և փաստորեն այն օբյեկտիվության ուղիղ ցուցիչն է, մյուս կողմից՝ դա տեղի է ունենում ընդամենը մեկ անգամ և այլև երբեք, քանի որ սուբյեկտը անվանում է առարկան միայն ճանաչողության առաջին պահին, իսկ դրանից հետո բառը դառնում է իր անվանած օբյեկտիվ հիմքի վերացարկում, որը այդուհետ ենթակա է սուբյեկտիվ գիտակցության կամքին, ասել է թե՛ «ես գիտեմ, որ խնձորը ծառին աճող պտուղ է, բայց ինձ ոչ ոք չի արգելի ընկերոջս նույնպես «խնձոր» անվանել»:**

Մեկ այլ մոտեցում. օբյեկտիվության մակարդակում գործում է ինքնին հասկանալի կարգ. հատկությունը պատկանում է իր կրողին, գործողությունը՝ իր կատարողին, վիճակը՝ իր ենթակային: Այս կարգը ոչ միայն տրամաբանական է, այլ նաև ընկալողական. այն բխում է աշխարհի անմիջական փորձից, որտեղ առարկան և նրա հատկությունը, գործողությունն ու նրա իրականացնողը անբաժանելի են: Այստեղ իմաստը և դրա կրողը համընկնում են:

Լեզվում, սակայն, այս համընկնումը խզվում է: Կապակցված խոսքում այն, ինչը պետք է լիներ իմաստի կրող՝ բառը, դադարում է ի-

րականացնել այդ գործառույթը իր լիարժեք օբյեկտիվությամբ և ենթարկվում կատարյալ վերացարկման: Հատկանիշը, որ բնորոշ է հենց այս առարկային, և առարկան անբաժանելիորեն ունի այդ հատկանիշը, ճանաչողության ինչ-որ փուլում վերածվում է ինքնին մասնավոր օբյեկտիվ, բայց վերացական գոյության, որ կարող է այդուհետ ճանաչված և ընկալված լինել ինքնուրույնաբար: Օրինակ՝ սուբյեկտը երբեք չի ճանաչում «բարձր» հասկացությունը ինքնին, ճանաչում է «բարձր ինչ-որ բան» իրողությունը, հետո մեկ այլ «լավ ինչ-որ բան» և ի վերջո ձևավորվում է «բարձր»-ը իբրև առանձին կարգ, որով հնարավոր է բնութագրել մեկ այլ իրողություն ևս, որը օբյեկտիվորեն գուցե օժտված չէ այդ հատկանիշով: Սա հեշտ է տեսնել հատկապես արքետիպային հասկացությունների ձևավորման հարթությամբ, ինչպես, օրինակ՝ բարի, չար, գեղեցիկ, բարի, վեհ և այլն, որոնք ընդամենը հատկանիշներ են, որ վերածվել են բացարձակ վերացարկումների այն աստիճանի, որ ձեռք են բերել նույնիսկ առարկայական նշանակություն, և հնարավոր է անվերջ փնտրել, թե ո՞րն է Վեհը, ո՞րն է Գեղեցիկը և այլն: Իմաստը բաժանվում է իր ենթադրյալ աղբյուրից (Sartre, 1992) և տեղափոխվում է այլ մակարդակ:

Այս տեղաշարժը պարզապես տեխնիկական կամ կառուցվածքային երևույթ չէ: **Այն խախտում է իմաստի վերագրման այն տրամաբանությունը, որի վրա հիմնված է մարդկային մտածողությունը:** Եթե իրականության մեջ անհնար է պատկերացնել հատկություն առանց դրա կրողի, ապա լեզվում հնարավոր է իմաստ, որը գործում է առանց իր ակնկալվող կրողի կամ, ավելի ճիշտ, այլ կրողի վրա:

Սա է լեզվական արսուրդի էությունը. իմաստը գործում է այնտեղ, որտեղ այն «չպետք է» գործեր (Camus, 1991), և չի գործում այնտեղ, որտեղ այն «պետք է» լիներ: Այստեղ առաջանում է մի հակասություն ոչ թե արտահայտության ներսում, այլ արտահայտության և մտածողության միջև: Լեզուն սկսում է գործել մի տրամաբանությամբ, որը չի համընկնում աշխարհի մասին մարդու ինտուիտիվ տրամաբանության հետ:

Այս իրավիճակում իմաստը ձեռք է բերում յուրահատուկ ինքնավարություն (Heidegger, 1962): Այն այլևս չի բնակվում որևէ կոնկրետ միավորի մեջ, այլ ազատորեն բաշխվում է կառուցվածքի տարբեր տարրերի միջև: Այն կարող է կենտրոնանալ այնպիսի միավորների վրա, որոնք բնույթով իմաստակիրներ չեն, և հեռանալ այն միավորներից, որոնք նախատեսված են այդ դերի համար:

Լեզվական արսուրդը պատահական շեղում կամ լեզվական անկատարության հետևանք չէ: Այն լեզվի կառուցվածքային հնարավորություններից բխող անհրաժեշտ երևույթ է: Այն ցույց է տալիս, որ լեզուն չի ենթարկվում նույն տրամաբանական կարգին, ինչ իրականությունը, և որ իմաստը լեզվում ունի ինքնուրույն գոյության եղանակ, որը կարող է հակասել մեր կանխատեսումներին:

Այս խզումն է, որ լեզվին գոյաբանական լարում է հաղորդում մարդ արարածին հնարավորություն տալով տնօրինելու ոչ միայն օբյեկտիվորեն հասանելի իրականությունը, այլև նյութականությունից զուրկ սուբյեկտիվ ներքին տարածությունը: Լեզուն այդուհետ աշխարհի պարզ արտացոլում չէ. այն դառնում է մի դաշտ, որտեղ իմաստը կարող է գոյություն ունենալ իր կրողներից անկախ, փոխել իր տեղը, խախտել իր վերագրման կանոնները և, այդպիսով, բացահայտել մտածողության և արտահայտության միջև ընկած անլուծելի լարումը:

5. Արսուրդի երևութաբանությունը լեզվում

Ֆենոմենոլոգիական տեսանկյունից լեզվական արսուրդը չի սպառվում իր կառուցվածքային նկարագրությամբ: Այն պետք է ըմբռնել իբրև գիտակցության մեջ ձևավորվող (Husserl, 1983; Zahavi, 2019) հատուկ փորձառական ռեժիմ, որտեղ իմաստը ներկայանում է ոչ իր սովորական՝ կայուն և տեղայնացված ձևով (Moran, 2000), այլ ներքին խզումներով և տեղաշարժերով պայմանավորված երևույթ:

Գիտակցության սովորական աշխատանքի ընթացքում ընկալումը ձգտում է իմաստը տեղայնացնելու. փնտրում է կետ, որի մեջ կարող է հաստատվել իմաստը, մի միավոր, որը կարող է դրա կրողը դառնալ: Սա ոչ միայն լեզվական, այլ նաև հոգեբանական պահանջ է. իմաստը պետք է վերաբերի ինչ-որ բանի, որպեսզի ընկալումը կայունանա և ամբողջական դառնա:

Սակայն կապակցված խոսքի մեջ այս տեղայնացման մեխանիզմը սկսում է խափանվել: Խոսքը ներկայանում է որպես իմաստով լի ամբողջություն, և գիտակցությունը այն ընդունում է որպես ավարտված իմաստային դաշտ: Բայց հենց որ փորձառությունը ձգտում է այդ իմաստը վերագրելու առանձին միավորներին, առաջանում է ներքին անհամապատասխանություն: Այն բառերը, որոնց վրա ընկալումը սովորաբար կկենտրոնանար իբրև իմաստի կրողների, չեն արդարացնում

այդ սպասումը: Դրանք չեն դառնում այն կետերը, որոնց մեջ իմաստը կարող է հաստատվել:

Փոխարենը, **իմաստը** կարծես սահում է այդ միավորների վրայով՝ առանց դրանց մեջ ամրանալու: Այն **չի դառնում դրանց սեփականությունը, այլ մնում է որպես ընդհանուր դաշտի հատկություն**, ինչպես թափառող էլեկտրական հոսանքը: Միևնույն ժամանակ, գիտակցությունը արձանագրում է, որ իմաստի որոշիչ տարրերը կապված են այնպիսի միավորների հետ, որոնք բնույթով չեն համապատասխանում իմաստի կրողի դերին:

Առաջանում է հոգեբանական լարվածություն՝ իմաստի որոնման և դրա չտեղայնացման միջև: Գիտակցությունը «գիտի», որ իմաստը կա, բայց չի կարող այն կապել որևէ հստակ միավորի հետ: Այն չի կարող ցույց տալ իմաստի կրողը՝ առանց զգալու, որ ցույց տալը բավարար չէ:

Այս վիճակը միանգամայն կարող ենք անվանել իմաստի դիսցազիա իր կրողներից (Sartre, 1992): Իմաստը շարունակում է գործել, սակայն այն այլևս չի համընկնում այն կառուցվածքային միավորներին, որոնց վրա ուղղված է ընկալումը: Ի վերջո, գիտակցությունը հայտնվում է մի վիճակում, որտեղ իմաստը և դրա կրողը տարանջատվում են:

Սա այն պահն է, երբ լեզուն դադարում է իմաստի կայուն հենարան լինելուց և դառնում է մի միջավայր, որտեղ իմաստը մշտապես սահում է, խուսափում է վերջնական ամրագրումից և մնում է հարաբերականորեն անկայուն (Ricoeur, 1977)՝ ապահովելով հաղորդակցվող եզրերի ազատությունը:

Այս իմաստով՝ **լեզվական արսուրդը ունի նաև հոգեբանական խորք**. այն բացահայտում է ընկալման այն սահմանը, որտեղ գիտակցությունը այլևս չի կարող ամբողջությամբ վերահսկել իմաստի տեղաբաշխումը: Իմաստը դուրս է գալիս վերահսկելի վերագրման շրջանակից և շարժվում է իբրև ինքնուրույն, հարաբերականորեն անկախ գործընթաց:

Արսուրդի երևութաբանությունը լեզվում գիտակցության այն վիճակն է, երբ իմաստը զուրկ է կայուն տեղայնացումից, իսկ դրա կրողի որոնումը մնում է բաց և երբեք վերջնականապես չհագեցած:

Եզրակացություն

Կապակցված խոսքի՝ իբրև լեզվական իրողության դիտարկումը ցույց է տալիս, որ լեզվական միավորների իմաստային արտահայտումը չի կարող բացատրվել իբրև առանձին բառերի մեջ ներառված կայուն բովանդակությունների համակցություն: Խոսքում իմաստը չի պահպանվում իր նախնական՝ անվանողական կենտրոնացման ձևով, այլ ենթարկվում է կառուցվածքային վերաձևավորման, որի ընթացքում այն կորցնում է իր տեղայնացված բնույթը և դառնում է հարաբերականորեն բաշխված ամբողջական կառուցվածքի ներսում:

Ի վերջո բառը, որը մեկուսացած վիճակում իմաստի կրողն է, կապակցված խոսքում դադարում է այդ իմաստի ինքնաբավ կենտրոնը լինելուց: Նրա իմաստը ոչ թե վերանում է, այլ տարրալուծվում է կառուցվածքի մեջ՝ վերածվելով իմաստի փոխանցման և կազմակերպման միջանցքի: Զուգահեռաբար, այն միավորները, որոնք ինքնուրույն իմաստակիրներ չեն, ստանձնում են իմաստային կազմակերպման որոշիչ գործառույթը՝ ապահովելով խոսքի ուղղվածությունը, տրամաբանականությունը և հաղորդակցական ամբողջականությունը:

Այս երկակի շարժումն ի վերջո ձևավորում է իմաստի անհամաչափ բաշխում, որը խախտում է իմաստի և դրա կրողների միջև ենթադրվող համապատասխանությունը: Հենց այս խզումն է, որ լեզվական մակարդակում դրսևորվում է որպես արտուրդ՝ ոչ թե իբրև անհետթերություն, այլ իմաստի վերագրման տրամաբանական կառուցվածքի խախտում:

Երևութաբանական առումով այս արտուրդը արտահայտվում է այնպիսի փորձառությանը, որտեղ իմաստը միաժամանակ և՛ առկայացած է, և՛ չտեղայնացված: Գիտակցությունը ընկալում է խոսքը՝ որպես ամբողջական իմաստային դաշտ, սակայն չի կարող այդ իմաստը վերագրել որևէ կայուն միավորի: Իմաստը շարժական, հարաբերական և մշտապես վերակազմավորվող երևույթ է, որը չի հաստատվում ակնկալվող կրողների մեջ:

Այսպիսով, լեզուն իրականության պարզ արտացոլում կամ անվանում չէ, այլ ինքնուրույն կառուցողական դաշտ, որտեղ իմաստը ձևավորվում է ոչ թե առանձին միավորների միջոցով, այլ դրանց միջև հարաբերությունների համակարգում: Իմաստը լեզվում գոյություն ունի ոչ իբրև տեղայնացված հատկություն, այլ զարգացող գործընթաց, որը

մշտապես վերաձևավորում է իր կրողներին և խախտում դրանց նկատմամբ հաստատված տրամաբանական սպասումները:

Հետևաբար, **լեզվական արտադրող պետք է հասկանալ ոչ թե իբրև լեզվի սահմանափակում կամ խաթարում, այլ դրա ներքին հնարավորություններից բխող հիմնարար հատկություն:** Այն բացահայտում է, որ իմաստը լեզվում ունի ինքնուրույն գոյության եղանակ, որը չի ենթարկվում իրականության ինտուիտիվ տրամաբանությանը և հենց այդ պատճառով էլ ստեղծում է մտածողության և արտահայտության միջև մշտական լարվածություն:

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան – ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նյարդալեզվաբանության, հոգելեզվաբանության, հոգեիմաստաբանության, լեզվափիլիսոփայության հարցեր: Մենագրությունների և գիտական հոդվածների հեղինակ է, գիտական փորձարարական և դրամաշնորհային նախագծերի ղեկավար:

Օգտագործված գրականություն

1. **Camus, A.** (1991). *The myth of Sisyphus* (J. O'Brien, Trans.). Vintage. (Original work published 1942)
2. **Drożdżowicz, A.** (2023). Linguistic modalities and the sources of linguistic utterances. *Synthese*, 201. <https://doi.org/10.1007/s11229-023-04062-0>
3. Drożdżowicz, A. (2024). Linguistic understanding: Perception and inference. *Inquiry*. Advance online publication. <https://doi.org/10.1080/0020174X.2024.2442692>
4. Frege, G. (1952). On sense and reference. In P. Geach & M. Black (Eds.), *Translations from the philosophical writings of Gottlob Frege* (pp. 56–78). Blackwell. (Original work published 1892)
5. Heidegger, M. (1962). *Being and time* (J. Macquarrie & E. Robinson, Trans.). Harper & Row. (Original work published 1927)
6. Husserl, E. (1983). *Ideas pertaining to a pure phenomenology and to a phenomenological philosophy: First book* (F. Kersten, Trans.). Martinus Nijhoff. (Original work published 1913)
7. Husserl, E. (2001). *Logical investigations* (J. N. Findlay, Trans.). Routledge. (Original work published 1900–1901)
8. Moran, D. (2000). *Introduction to phenomenology*. Routledge.
9. Ricoeur, P. (1977). *The rule of metaphor: Multi-disciplinary studies of the creation of meaning in language*. University of Toronto Press.
10. Ruthrof, H. (2024). What makes natural language “natural”? *Inquiry*. Advance online publication. <https://doi.org/10.1080/00071773.2024.2365716>
11. Saussure, F. de. (1966). *Course in general linguistics* (W. Baskin, Trans.). McGraw-Hill. (Original work published 1916)

12. Searle, J. R. (1969). *Speech acts: An essay in the philosophy of language*. Cambridge University Press.
13. Soames, S. (2010). *Philosophy of language*. Princeton University Press.
14. Sartre, J.-P. (1992). *Being and nothingness* (H. E. Barnes, Trans.). Washington Square Press. (Original work published 1943)
15. Sartre, J.-P. (2007). *Existentialism is a humanism* (C. Macomber, Trans.). Yale University Press. (Original work published 1946)
16. Wittgenstein, L. (1953). *Philosophical Investigations*. Blackwell.
17. Zahavi, D. (2019). *Phenomenology: The basics*. Routledge.